



Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ
Տ. ՍԱՅԱԿ ԱՐԲ. ՄԱՇԱԼԵԱՆԻ ՔԱՐԱՉԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ԳԱՅԱՆԷ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՈՒԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(11 հունիսի, 2023)

«Նթէ մոռացայց գեգ, Երուսաղէմ մոռացի զիս աչ
իմ: Կցեսցի լեզու իմ ի բիմս իմ՝ թէ ոչ յիշեցից գեգ»
(Սղմ. ՃԼԶ. 5–6):

Լզգերու պատմութեան մէջ չկայ աւելի զօրաւոր երգում մը որ փրկարար դեր կատարած ըլլայ ազգի մը համար: Երկու հազար հինգ հարիւր տարի դժբախտ ազգի մը այդ բոլոր պատմութեան ելեւէջներուն ուժ տուած է, իմաստութիւն տուած է, տեսիլք դրած է անոնց առջեւ: Զարմանալի է իրապէս, այս մի քանի նախադասութիւնը, փրկարար դեր կատարած է Հրեայ ժողովուրդին համար: Եկէ՛ք, խօսինք քիչ մը, թէ ինչպէս փրկարար դեր կատարեց այս երգումը:

136րդ սաղմոսը, որ Երեմիա Մարգարէին կը վերագրուի, գրուած է Բաբելոնի աքսորի մէջ: Ազգ մը, կորսնցուցած է իր երկիրը, իր բոլոր քաղաքները, ժողովուրդը սուրէ անցած, մնացորդացը գերեվարուած եւ աքսորի տարուած Բաբելոնի Կայսրութեան, եւ այդտեղ կորսնցուցած՝ իր բոլոր սրբութիւնները, Երուսաղէմը, Տաճարը, տաճարի սրբութիւնները, ուխտի տապանակը, ամէն ինչ կորսուած է: Եւ այդ տխրութեան մէջ էին Հրեաները, իրենց առաջնորդները, կը մտածէին եւ կ'ըսէին որ կորսնցուցինք ամէն ինչ: Բայց Աստուած ներշնչեց իրենց, առաջնորդները, եւ ըսաւ անոնց որ Երուսաղէմը կորսուած չէ, տեղ մը կը մնայ անիկա: Անդաչելի, անձեռնմխելի, նոյնիսկ ձեր յիշած երուսաղէմէն աւելի զօրաւոր կերպով: Տաճարը կը մնայ, ձեր սուրբ երկիրը կը մնայ. Այդ ձեր յիշողութիւնն է: Զեր յիշողութեան եւ հոգիին մէջ: Երբ որ կը յիշէք անիկա, եւ այդ յիշողութիւնը միշտ թարմ կը պահէք, այն ատեն, դուք վերստին կ'ունենաք Երուսաղէմը, Տաճարը, ձեր երկիրը:

Ուրեմն, գերութեան մէջ Հրեայ առաջնորդները, երդումով կապեցին իրենց ժողովուրդը, այս երդումով: Երբ իրենք խրախճանք ունէին, նախ եւ առաջ Երուսաղէմը կը յիշէին: Իրենց բոլոր երգերէն առաջ Երուսաղէմի երգը կ'երգէին եւ ի վերջոյ 70 տարի յետոյ, իրենք վերադարձան Երուսաղէմ: Ան Հրեաները երբեք չէին տեսած Երուսաղէմը, երբեք չէին տեսած տաճարը, անոնք վերակերտեցին: Մէկ կողմէ շինարարութիւն, միւս կողմէ պայքար կը մղէին եւ յաջողեցան: Երկրորդ տաճարը, աւելի փառաւոր եղաւ առաջինէն, որովհետեւ Տէրը ինք այցելեց այդ տաճարը, ինչպէս մարգարէն կ'ըսէ: Հոն պատահեցաւ աշխարհի ամենէն կարեւոր դէպքը, Աւագ Շաբաթի ընթացքին, Տէր Յիսուս Քրիստոս հոն խաչուեցաւ, թաղուեցաւ, յարութիւն առաւ, երկինք համբարձաւ, եւ այս ժողովուրդը, կը սիրէր տաճարը, Երուսաղէմը, բայց եւ այնպէս սխալներ գործեցին, 66 թուականին ապստամբեցան Հռովմէացիներու դէմ եւ չորս տարի տեւած պատերազմէն յետոյ իրենք կրկին կորսնցուցին իրենց երկիրը: Մէկ միլիոնէ աւելի Հրեայ սուրէ անցուցին, մնացեալները ո՛չ թէ մէկ քաղաք, այլ Հռովմէական Կայսրութեան տարածքին ցրուեցան: 100 տարի Հրեաները ոտք չէին կրնար կոխել Երուսաղէմ: Ուրեմն այս վիճակին մէջ, կրկին այս սաղմոսը, փրկիչը դարձաւ այս ազգին:

Իրենք երբ որ կը հաւաքուէին, խրախճանքներ կ'ընէին, եւ առաջին բաժակը կը բարձրացնէին, «յաջորդ տարի Երուսաղէմ» ըսելով: 100 տարի, 200, 500, 1000, 1500, 1900 տարի առանց Երուսաղէմ ունենալու իրենք ըսին «յաջորդ տարի Երուսաղէմ»: Ուրեմն, 1967ին, Երուսաղէմը ձեռք անցուցին: Ուրեմն հիմա այդ Երուսաղէմը կ'ուզեն բարձրացնել, որպէս աշխարհի մայրաքաղաքը եւ կը պատրաստեն անիկա վերջին օրերու համար:

Սիրելիներ, մենք որ Աստուածաշունչի հետեւած ժողովուրդ ենք, այս պէտք է պատմէի ձեզի, որպէսզի հասկնանք, թէ՛ մենք Կաթողիկէ Ս. Էջմիածնի Տօնին ինչ կը տօնենք: Ինչո՞ւ համար կարեւոր է Ս. Էջմիածինը մեզի համար: Այսինքն երբ որ Երուսաղէմը, այսքան կը մեծարեն, Երեմիա Մարգարէն, կռապա՛շտ է: Քարե՛րն էին կարեւորը, կամ տաճա՛րն էր կարեւորը: Չէ, որովհետեւ Աստուած, որ մարդկութեան մէջ գործ կը կատարէ, անպայման կը մարմնանան իր գործերը: Տեղի եւ ժամանակին մէջ կը մտնեն: Հետեւաբար այն գործերը, նիւթական յիշատակներու հետ միասին կ'ապրին: Հետեւաբար, Երուսաղէմը միայն քար չէ եւ Ս. Էջմիածինը միայն տաճար չէ մեզի համար: Մեր ազգը միացնող ամենէն զօրաւոր

տարրերէն մէկն է: Իտէալ մըն է, ուխտ մըն է եւ նաեւ տեսիլք մըն է մեզի համար: Երբ որ Ս. Գրիգոր Լուսաւորիչին տրուեցաւ Ս. Էջմիածնի տեսիլքը լուսեղէն գիծերով, մենք բոլորս այդ տեսիլքը պէտք է ունենանք միշտ: Եւ մեր ազգն ալ Աստուածաշնչական իմաստութեամբ շատ դասեր քաղեր է Սուրբ Գիրքէն: Ինչպէս Ս. Վարդանանց Պատերազմը Մակաբայեցւոց Գիրքէն ներշնչուելով յառաջ տարած է մեր ազգը, Երուսաղէմի հանդէպ Հրեաներու ունեցած այս բծախնդրութիւնն ու գուրգուրանքը ընդօրինակած է իր սրբութիւններուն վերաբերեալ: Մեզի համար այս տարածքը, Վաղարշապատը, դարձած է Ս. Էջմիածին: Մենք չդարձուցինք, Աստուած ըրաւ անիկա մեզի համար: Մենք մեր մտքէն չստեղծեցինք, Աստուած տուաւ մեզի Աւագ Շաբաթ մը, Հայկական Աւագ Շաբաթ մը, որ Հռիփսիմեանց Կոյսերու նահատակութեամբ կը սկսի եւ կը հասնի ամբողջ շաբաթը Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ելն ի վիրապին, իր տեսիլքին, հայոց պետականութեան քրիստոնէացման դէմքին եւ ի վերջոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ այս տեսիլքին: Այս շաբաթն է որ մեր ազգի պատմութեան անմոռանալի հետքեր թողած է: Եւ մեր նախնիները, մեր իմաստուն հայրապետները, սորուած են այդ գաղտնիքը, եւ ամենէն վեր բարձրացուցած են Սուրբ Էջմիածինը, անոր խորհուրդը, Մայր Աթոռը եւ երբ որ չէ արտօնած պատմութիւնը մեզի Էջմիածինը ունենալ, տաճարը ունենալ, երբ գաղթած ենք, Աթոռն ալ առեր ու միասին տարեր ենք, Դուինէ սկսեալ, Անի եւ այլ քաղաքներ: 1000 տարի պտըտեր է այս Ս. Էջմիածինը, առանց իր վայրը գտնուելու: Եւ 1441ին Սիսէն վերստին փոխադրուած է իր բնական տեղը: Ինչո՞ւ: Որովհետեւ 1000 տարի մեր ազգը այն ցաւն ու տառապանքը ունէր: Այո, Աթոռը կը շրջի, ճիշտ է որ եկեղեցին հաւատացեալներու խումբն է, բայց Աստուած մարմնացուց իր իտէալը, Ս. Էջմիածնի Տաճարին մէջ: Հետեւաբար առանց անոր Հայը անհանգիստ է: Եւ նայեցէք, մեր պապերը կարողացած են այդ խորհուրդը փոխանցել նոր սերունդներուն եւ անոր շնորհիւ մենք մէկ ազգ մըն ենք: Այնպէս որ սիրելիներ, իրապէս ազգային մեծ եկեղեցական տօն է Կաթողիկէ Ս. Էջմիածնի Տօնը: Մենք այս տօնի մէջ շատ բաներ կը տօնենք ու կը յիշենք: Պէտք է յիշենք, որովհետեւ մենք ալ դժբախտ ազգ մըն ենք: Մեր նուազագոյն երկու երրորդը սփիւռքի մէջ կ'ապրի: Տարբեր երկիրներու մէջ տարտղնած, իրենց լեզուն յաճախ մոռցած, իրենց աւանդութիւնը չգիտցող, երբեմն եկեղեցի յաճախելու մէջ ծուլացող: Ուրեմն ստիպուած ենք, մեր սրբութիւնները միշտ վառ պահել մեր ժողովուրդի յիշողութեան մէջ: Պէտք է միացնող

գիծեր ունենանք մենք: Պէտք ունինք Ս. Էջմիածնին: Պէտք ունինք այդ կապերուն եւս, որպէսզի բոլոր սփռուած գիծերը գան եւ այս վայրին՝ Մայր Աթոռին մէջ եւ սրբութեան ուխտատեղի Մայր Տաճարին մէջ միանան: Խաչածեւուին բոլորը:

Ճիշտ է որ մենք բոլոր եպիսկոպոսները կրնանք միւռոն օրհնել, ինչպէս միւս եկեղեցիները կը կատարեն: Սակայն մեր մեծերը ըսած են որ պէտք է մէկ տեղ օրհնենք մենք միւռոնը եւ Հայրապետի օրհնութեամբ, Ս. Գրիգոր Լուսաւորիչի աջի զօրութեամբ միասնաբար տօնելով մէկ տեղ պէտք է օրհնենք եւ ապա անիկա սփռուի բոլոր անկիւնները ուր որ հայ կ'ապրի: Եւ հոնկէ օրհնութիւնը բաշխուի: Երեք եպիսկոպոս քով քովի կուգան եւ կրնան շորորողը ձեռնադրել: Կանոնական ոեւէ խնդիր չկայ: Բայց մեր մեծերը ըսած են, քաւ լիցի: Գոնէ եկեղեցւոյ առաջնորդները թող գան, Էջմիածնի խորհուրդը ճաշակեն, հոն ուխտ կատարեն, հոնկէ ստանան Ս. Գրիգոր Լուսաւորիչի օրհնութիւնը եւ ապա երթան իրենց թեմերը առաջնորդելու: Այս խորհուրդները իմաստութիւններ են, որ մենք չստեղծեցինք: Փառք Աստուծոյ, մեր պապերը, մտածած են եւ այս բոլորը կատարած՝ մեզի համար: Իսկ հիմա մեզի կը մնայ այդ սրբութիւնները մեծարել ու գովել: Մենք այդ կ'ընենք: Էջմիածնի պատկերները, արձանիկները ունինք մեր տուններուն մէջ: Մենք Հայրապետի պատկերը ունինք ամենայն բարձր տեղ կը դնենք մեր սրահներուն: Մենք տարուան մէջ քանի մը անգամներ Հայրապետական Մաղթանք կը կատարենք, ինչպէս որ այսօր բոլոր Հայ Առաքելական Եկեղեցիները այս տօնին առթիւ մաղթանք պիտի կատարեն ու պիտի աղօթենք Մայր Աթոռի անսասանութեան համար:

Մենք ազգ մըն ենք որ ցրուելու շատ պատրաստ եւ երբեմն կեանքը կը ստիպէ մեզի: Ուրեմն, մենք ստիպուած ենք այս սրբութիւնները մեր սրտին մէջ, ուղեղին մէջ հաստատել բոլոր մեր ազգակիցներուն համար: Այս է պատճառը որ մեր եկեղեցականները, դպրոցներուն հայոց եկեղեցւոյ պատմութեան դասերը կ'ուզեն որ շարունակուի: Որովհետեւ անիկա իմաստութիւն մըն է որ բոլոր աշակերտները հաւատան կամ չհաւատան, լաւ սորուին կամ չսորուին, այդ դասագիրքերը ունենան: Անոնց նկարներուն մէջ, մեր վանքերուն նկարները տեսնեն, եկեղեցիներու նկարները տեսնեն: Իմանան իրենց տօները եւ սորուին թէ Աստուած ի՞նչ կատարած է այս ազգին մէջ: Մենք անոր համար հակառակ ենք աղանդաւորներուն, որովհետեւ անոնք կ'առնեն Ս. Գիրքը եւ վերստին կը կարդան:

Կարծես թէ Աստուած 1900 տարի ոչ մէկ գործ կատարած ըլլար: Այս մէկը ուղղակիօրէն Ս. Հոգիին հայհոյութիւն է: Հայաստանի մէջ 1900 տարի Ս. Հոգին իրապէս գործ չըրաւ: Իր երկու առաքեալը շուղարկեց հոս: Այստեղ նահատակաց արիւնով, Ս. Գրիգոր Լուսաւորչի զօրութեամբ եկեղեցի չհաստատուեցաւ: Ս. Մեսրոպին չներշնչեց Ս. Հոգին: Զունեցանք մենք նարեկը, Վարդանանցը: Ինչպէս Ս. Հոգին չէ աշխատած: Եթէ կ'ըսեն որ աշխատած է, ուրեմն պէտք է անդրադառնան ու գնահատեն:

Պատմութենէ փրթած Քրիստոնէութիւն մը չկայ: Ո՛չ Հին Կտակարանին եւ ո՛չ ալ Նոր Կտակարանին մէջ: Աստուծոյ բոլոր գործերը պատմութեան մէջ են եւ անոնք արձանագրուած՝ որպէս յիշատակելի կոթողներ: Հետեւաբար ի յարգանս պէտք է յիշենք այս բոլորը եւ փառք տանք Աստուծոյ այդ մեծամեծ գործերուն համար: Ս. Էջմիածնի տաճարը Ս. Աստուածածին անունով օծուած է: Հետեւաբար Մայր Աստուածածնի պէս այդ տաճարն ալ մայր եղած է: Իր ոճը ճարտարապետական կաթողիկէ բոլոր հայ եկեղեցիներու տիպարը դարձած է եւ այդ մէկ եկեղեցին ծնունդ տուած է ուրիշ եկեղեցիներուն: Կաթողիկէ բառը մեզի մտածել կուտայ որ տարբեր առընչութիւններով գործածուած է անիկա: Միայն ճարտարապետական ոճով չէ: Նախ եւ առաջ, Կաթողիկոսարանի եկեղեցին է: Երկրորդ՝ կաթողիկէ կը նշանակէ ընդհանրական, տիեզերական: Երբ որ Քրիստոս որոշեց որ իր եկեղեցին այլեւս դադրի հալածուելէ թագաւորութիւններու ոտքի կոխան ըլլալէ, քրիստոնեաներ պաշտամունք չկատարեն ամայի քարայրներու մէջ, ուզեց որ տաճարներ հիմնուին, այդ տեսիլքը սկսած է Ս. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքով Ս. Էջմիածնի տաճարին մէջ: Անիկա գարնան օրը ծաղկած առաջին ծաղիկն է: Անկէ յետոյ աշխարհի չորս կողմը ի հիմանէ եկեղեցիներու կառուցումը սկսաւ: Բայց մերը առաջինն է: Անոր համար կաթողիկէ է, այսինքն ընդհանրական է:

Յիսուս ըսաւ «Ալֆան եւ Օմէկան ես եմ»: Ուրեմն երբ Աստուած սկսաւ Երուսաղէմի հետ գործ մը եւ իր կատարին պիտի հասցնէ Երուսաղէմով, այնպէս ալ Աստուած գործ մը սկսած է Հայաստան աշխարհի այս հողատարածքին վրայ, ուրեմն Օմէկան պիտի դառնայ նոյն վայրը նաեւ աշխարհի վերջաւորութեան: Մենք մեր արժէքներու մասին փոքր կը մտածենք, բայց Աստուած ունի իր ծրագիրները: Հետեւաբար օր մը պիտի գայ ո՛չ միայն Հայոց աշխարհի, այլ ամբողջ աշխարհի օրհնութեան աղբիւրը պիտի դառնայ Ս. Էջմիածինը: Ես ունիմ այդ հաւատքն ու տեսիլքը:

Դուք ալ ունեցէք եւ աղօթենք միասնաբար, որ Աստուած վերստին իջնէ այս տարածքին եւ այստեղէն բաշխէ իր օրհնութիւնները:

Մայր Տաճարը բոլորս շատ կը սիրենք եւ անհամբեր ենք անոր վերաբացման: Վստահ եմ որ դուք ալ անհամբերութեամբ կը սպասէք, ինչպէս՝ ես: Բայց ամենէն անհամբեր սպասողը Ազգիս Վեհափառ Հայրապետն է, որ իր կեանքի թերեւս մեծագոյն գործը կատարած պիտի ըլլայ եւ մեր ազգին նուիրուած առնուազն 400 տարի նորոգութեան պէտք չունեցող ժառանգ մը պիտի թողու: Ուրեմն Վեհափառ Հայրապետը երբ որ այդ տաճարը նորոգելու սկսած է հարկաւ գիտեր թէ հնութիւններու հետ զբաղուիլ շատ դիւրին գործ չէ: Կարելի չէ ժամկէտ դնել հնութիւնները նորոգելու ատեն, որովհետեւ ինչ որ ձեռք կը նետէք կարելի է ձեր ձեռքը մնայ: Այնքան խիստ վիճակի հասած էր Մայր Տաճարը, որ թերեւս 300—400 տարի նորոգութիւն չէ տեսած եւ հիմա բծախնդիր աշխատութիւններ կը կատարուին: Մենք տեսանք ու այցելեցինք եւ լաւ լուրը այն է որ քանի մը ամսուան գործ մնացած է եւ այդ գործը պիտի կատարուի եւ տաճարը ու իր ժողովուրդը պիտի ողջագուրուին անհամբերութեամբ ու աղօթքով: Կը սպասենք այս օրերուն: Վեհափառ Հայրապետը իր աշխատանքի սկզբունքը դարձուցած է կատարելապաշտութիւնն ու բծախնդրութիւնը, յատկապէս տաճարներու վերաբերեալ: Հետեւաբար ինքը Պօղոս Առաքեալի խօսքին հետեւող հոգեւորական մըն է. «Ինչ գործ որ կ'ընես ձեռքիդ ամբողջ զօրութեամբը գործէ, կարծես թէ Աստուծոյ համար կ'ընես»:

Ուրեմն, այսօր մաղթանք պիտի կատարենք: Մայր Աթոռի ու մեր Հայրապետին համար պիտի աղօթենք: Նորին Սրբութեան առողջութեան, արեւշատութեան, խաղաղութեան համար պիտի աղօթենք, որպէսզի իր գաւազանը ծաղկեալ մնայ: Վեհափառ Տէր, մենք հոս ենք, եկեղեցական դաս եւ հաւատացեալ ժողովուրդ եւ աշխարհասփիւռ բոլոր հայերս: Մենք լաւ կը գիտակցինք Մայր Աթոռին եւ Ս. Էջմիածնին այդ սէմպոլիք խորհրդական իմաստին: Մենք պէտքն ու կարիքն ունինք գիտակցելու: Կը խնդրենք ձեզմէ որ հաստատ մնաք ձեր տեղը: Ձեր ծրագիրները իրականանան, որովհետեւ մենք անձամբ կը ճանչնանք ու կը վկայենք, թէ ինչ ըրած էք Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին ու յատկապէս այս սուրբ տարածքին համար: Ազգօգուտ է այդ բոլորը եւ Աստուծոյ հաճոյքներուն յարմար եւ Դուք մեծ ժառանգ մը կը թողուք: Աստուած օրհնէ ձեզ եւ զօրութիւն պարգեւէ ձեզի: Աստուած նորանոր տեսիլքներով

օժտէ ձեզ եւ Դուք առաջնորդէք մեզ 21րդ դարու այս դժուարին շրջաններուն եւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ աւանդութիւնները եւ առաքելութիւնը թող ծաղկին ձեր գաւազանով: Տէրը օրհնէ Ս. Էջմիածինը: Կրնանք արդեօք կրկնել Հրեաներու երդումը Ս. Էջմիածնի համար: Էջմիածին, Էջմիածին, եթէ մոռանամ քեզ թող իմ աչս կորսնցնէ իր կարողութիւնը: Եթէ չլիշեմ քեզ, Ս. Էջմիածին, եւ քեզ իմ բոլոր հաճոյքներէս առաջ չգովերգեմ թող լեզուս կպչի իմ քիմքիս:

Ս. Էջմիածինը իրապէս ազգովին մեզի շատ բաներ տուած է եւ պէտք է փոխանցենք անոնք մեզմէ ուրիշներուն: Դարէ դար ան պէտք է փոխանցուի, որ երբ Քրիստոս վերադառնայ երկրորդ անգամ, այստեղ գտնէ իր տաճարը, իր ուժով ու տեսիլքով հաստատուած տաճարը բարւոք վիճակի մէջ: Ամէն:

